

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՅ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԻՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԸ ԵՒ ԻՐ ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ

(Շար. տես «Բազմավեպ» 1964, ք. 10-12, էջ 241)

ԳԼՈՒԽ Ա.

ՍՐԲԱԶԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Պատրաստութիւն պաշտամունքի: -
2. Աղօթքի գգեստներ: - 3. Լուսացում: -
4. Խնկարկութիւններ: - 5. Աղօթքի ձեւեր: - 6. Լուսութիւն՝ յետ Խաղաղականի:

Աղօթամատուցին նկարագրութեան մէջ յիշատակեցինք այն արարողական մասերը, որ սերտ կապ ունէին աղօթքներուն կամ երգերուն հետ: Իսկ այս տեղ միայն կ'ուզենք ամփոփել անոնք որ ընդհանուր հանգամանք ունենալով՝ այն տեղ յիշելու պէտքը չզգացուեցաւ, եւ զորս առանձինն աւելի ուշադրութեամբ կրնանք նկատել:

1. Պատրաստութիւն պաշտամունքի. - Մաքենեաց խորանները այս հրահանգը կու տան զիշերային աղօթքին սկիզբը. «յառաջ քան զամենայն պարտ է յառնել փակակալին», որուն անձը ծանօթ է մեզի (Ա. Բ.): Մինչդեռ ժամկոչը կը թափառէր հրաւիրելով հաւատացեալները, ինք կը կանխէր «զամենայն ջահ եւ զկանթեղքն լուսանել», որուն նպատակը տեսանք նոյնպէս (Ա. Ժ.): Յետոյ խնկանոցը ձեռքին՝ կը շրջէր «խունկ արկանել» աղօթատեղիին մէջ (անդ): Ա. տ. որ բացատրութիւնը կամ մէկ տեսակն էր Տաթեւացիին ըստ՝ թէ «յանկիւնս եկեղեցւոյն խունկ վա-

ռեմք» (Հրց. 363): Նոյն սովորութիւնը կը յիշեն եւ Վարք Հարանց, խօսելով անանուն մենաստանի մը մասին «իրբեւ ժամ եղեւ աղօթիցն, եւ եմուտ սարկաւազն խնկել», եւ ապա «հասեալ ժամ՝ ժողովեցան եղբարքն»:

Փակակալը հուսկ կը հնչեցնէր «զգանկակն կամ զժամահարսն», ըստ խորաններուն. այսինքն անոնցմէ որը որ կար (Ա. Ժ.). իսկ ժամահարի կիրարկութիւնը ծանօթ է մեզի Է. դարէն. եւ «ազգարարութիւն ժամահարին» կը յիշուի կեղծ Օմեյեյիէն (109): Նոյն լուցումը, խնկարկութիւնն ու զանգակահարութիւնը կրկնել կու տան խորանները նաեւ երեկոյ: Իսկ ճաշու աղօթքին մէջ տարբերութիւն մը կը զնէ. եթէ կային զանգակներու երկու տեսակներն ալ, նախ «երեք անգամ հարկանեն զգանկակն, (ինչ որ սովորական թիւն է) եւ հարկանեն զփայտածամահարն զկնի՝ ըստ հնոյն, որ է ի յարգանս նախկին աւանդութեան, երբ դեռ կոչնակը միայն կար: Մաքենեաց խորանները աղօթակոչ հարուածներէն զատ կը յիշեն Փառք ի բարձունս երգին, «ի հանդիսի աւուրն ժամահարաւ», իմանալով անշուշտ իր սովորական տեղէն, ոչ թէ եկեղեցւոյ մէջ:

«Հնչումն ժամահարին եւ զանգակին» (Քրդ. ձմր. 9) տարբերութիւն մը ունէր Սիւնիքի մէջ եւ կամ Տաթեւացիի օրով: «Ի տարեմուտս եւ ի տօնս զլիաւորս, կ'ը-

սէ նա, հնչեմք զգանկակն», կամ «հնչումն զանկակացն ի տօնս տէրունականս եւ յերեւելիս», ինչպէս «Առաքելոց» (անդ՝ 9): Կը հետեւի՝ որ սոսկ օրերուն կը կիրարկուէր ժամահարը միայն, որով ան կրնար յիշել խորհուրդը «ժամահարին» որ համապազ հնչէ յականջս մեր» (անդ՝ 9): Կը յարէ. դարձեալ, թէ մինչ զանգակը կը զօղանջը զանգակատունէն (աստ՝ Ա. Ժ.), ընդհակառակն՝ ժամահարը՝ որ շարժուն էր, «նախ հարկանի ի դրունս եկեղեցւոյն, եւ ապա ի հեռաւորսն», (անդ՝ 9): Զ'ըսեր՝ շրջեցնելով զայն փողոցէ փողոց, այլ հաւանօրէն հանելով բարձրութեան մը վրայ, որպէս զի ձայնը հասնէր «ի հեռատանէ»:

Հաւատացեալները՝ որ կը լսէին այդ հրաւերը զէպի աղօթատեղի, կը խաչակնքէին իրենք զիրենք. որով Նարեկացին կը սահմանէ զայն՝ «յիշատակ մեծ տեսանալութեան յերեսս կերպիս Հոգւովդ սրբով զնշան խաչիդ» (Զբ. 2): Գր. Սկեւոյցին նոյնը կը հաստատէ, խօսելով վանականներուն. «Յորժամ հոգեւոր փողն հարկանի եւ դու արթնանաս (անոր ձայնէն), իսկ եւ իսկ կնքեալ զքեզ նշանաւ խաչին՝ յիշելով զամենասուրբ Երրորդութիւնն: ... Եւ յարուցեալ՝ աղօթելով երթիցես ի տեղի աղօթիցն»:

2. Աղօթքի գգեստներ. - ա. Ս. Հայրերը եկեղեցի զացող աշխարհականներէն կը պահանջէին նախ համեստութիւն բարձրութեւն եւ պարզութիւն զգեստներու, որոնց մէջ կ'երեւի թէ կը պահսէին Ե. դարու մեր ազնուականներէն ոմանք, եւ որոնց զէմ կը բողոքէր Մանգակունի հայրապետը, զրելով այսպէս. «Լուսնամբ եւ օծանիմբ եւ զհանդերձսն պաճուճեմք, որպէս թէ ի բողանոցս կազմիցիմք կամ ի թատերս խաղուց. եւ մտեալ յեկեղեցին սնափառ պերճանօք եւ մոլեկան հպարտանօք, կանայք բողից կերպարանօք կան առաջի Աստուծոյ, եւ արք բողահոմանեաց» եւն. (42), փոխանակ մատչելու «զձուճ ձեւով, բեկեալ սրտիւ, խոնարհեալ անձամբ» (43): Ի հեճուկս Առաջնորդներու խոսու-

թեան՝ եղեր են միշտ զեղծարարներ, որոնց մասին կրնար զրել տակաւին Առաքել Սիւնեցին ԺԵ դարուն. «Կէսք զարդարեալ երթան ի ժամ, զի ցուցանեն զինքեանս մարդկան»: Եւ մեզի աւելորդ է երկարել այս նիւթիս վրայ. այլ անցնինք նկատելու աղօթքի յատուկ ձեւերը ժամապաշտութեան կարգով եւ անոր մէջ կիրարկուածները միայն:

Բ. Սրբազան զրեստը սեպհական էր պատարազին. իսկ ժամերգութեան միջոց՝ եկեղեցւոյ պաշտօնեաները կը կենային իրենց աստիճանին յատուկ արտաքին ըզզեստով: Գ. դարէն տեսանք արդէն այդ պարագան. եւ այնուհետեւ խնդրի նիւթ էր եղած մինչեւ Գր. Տաթեւացին, որ կը զրէ. «Քահանայից ոչ է պարտ առանց փիլոնի մտանել յեկեղեցիս» աղօթելու (Քար. ամբ. 706): Գիտենք Պ. Տարօնեցիի, Մ. Գոշի եւ ուրիշներու վկայութիւններէն՝ որ փիլոնը քահանայական արտաքին հանդերձին մասն էր (Պոմ. Տրդ. 322-334): Իսկ միւս աստիճաններու արտաքին ձեւը պճղնաւոր պարեգօտն էր (անդ 323): Եւ եթէ քահանան իր արտաքինով կը բաւականանար, բնական էր որ միւսներն ալ զո՛հ ըլլային իրենցով: Նմանապէս եւ վանականները: Եւ երբ նկատենք որ Ժ-ԺԵ դարերուն շատեր սովոր էին պատարազն անգամ առանց սրբազան զրեստներու մատուցանել (անդ՝ 318-20), զիւրաւ կը համոզուինք անոնց զանցառումին՝ ժամակարգութեան մէջ: Արդէն նոյնը կը հաստատէր եւ Ն. Շնորհալին, պահանջելով շուրջապը՝ Աւետարանի ընթերցման եւ արարողութեանց համար միայն. «Ոչ ունել քահանայից յԱստուծոյ եւ ի մէնջ հրաման՝ առանց սուրբ ծածկութի պատարազամատուցին զընելոյ... Աւետարան կարդալ, կամ խաչ առնուլ ի ձեռս, կամ յայլ սրբութիւնս մերձեանալ» (Նմկ. 144): Նոյնը կը վկայեն եւ տօնացոյցները, արարողութեան սկիզբը հազուեցնելով:

3. Լուսացում. - Հրէական օրէնք էր՝ որ քահանաները նախ քան մերձեանալը տա-

ճարի սեղանին՝ կը լուսային «ղճեռս եւ զոտս իւրեանց» պղնձի աւաղանին մէջ (Եւք. Լ. 20): Յուդիթ Հողեփեռնի բանա- կին մէջ նոյնպէս աղօթելէն առաջ «մկըր- տէր... յաղբերս ջուրցն՝ ըստ օրինի Հրէ- իցն» (ԺԲ. 7-9): Այս ոճը մտաւ նաեւ քրիստոնեաներու մէջ: Ոսկերեքան կը գը- րէ. «Յեկեղեցւոյ աշակիսի սովորութիւն տեսանեմք ի բազումս. սուրբ (մաքուր) հանդերձից, եւ գճեռս եւ գրեքան լուա- նալոյ պատկառեն» (Մեկն. Մտթ. Ա. 731): Եւ դարձեալ, «սովորութիւն առաք նախ գճեռս լուանալ եւ ապա յաղթս կալ. եւ դանդաղիմք առանց այնր յաղթս մատչել» մեղանչելու երկիւղով (Մեկն. Պաւլ. Ա. 231, ըստ յն.): Այս լուսացու- մին մէջ կար հոգեւոր մաքրութեան մը դադարաւորը, այսինքն սրբելու մեղքերը՝ նախ քան Աստուծոյ հետ խօսելը (Կարբուլ. Բ. 82-87): Ասոր համար՝ եկեղեցիներու դաւիթին մէջ աղբիւրներ կային, ուր կը կատարուէր լուսացումը, եւ որոնց մասին ընդարձակօրէն կը խօսի Լըկլերկ (անդ՝ 1955-59):

Նոյն սովորութիւնն ու սպասը ծանօթ էին նաեւ Հայոց մօտ: Ստ. Օրբելեան կը խօ- սի Ե. դարուն ապրող Հայր Գիւտի մա- սին, որդի Շարաթի, յիշուած նաեւ Կո- րինէ (14), որ վաճառ մը կը հիմնէ եկե- ղեցիով հանդերձ, եւ օր մը Քրիստոսաստ- րի հետ «փութացան յեկեղեցին, եւ մտնալ յաղբիւրն լուացին զինքեանս, եւ մօտին յեկեղեցին, եւ համբուրէին զսուրբ սե- ղանն» (63): Պատմիչը այս տեղեկութիւնն առեր է նոյն ուխտին եկեղեցական Յովհան- նու շարադրութեամբ, ինչ որ ապացոյց է աւանդութեան հնութեան: Մանդակունիի բացատրութիւնը՝ «լուանալ եւ օծա- նիւմ» զոր տեսանք վերեւ, կրնայ կապ ունենալ այդ սովորութեան հետ, եւ Ոս- կերեքանի ըսածին կը նմանի, բայց աւե- լի խօսուեն են: Գառնի, Այրեւանքի ուխտին մօտ, երկու վիմափոր մատուռներ կան, շինուած ԺԳ. դարուն, որոնցմէ մէկը մին- չեւ այժմ անկորուստ կը մնար, մէկ մէկ ինքնարուխ աղբիւրներ ունէին (Արիշ. Այրբու. 341): Հայաստանի ուղեւորները

այս կէտին ուշ չեն դարձուցած իրենց հը- նախօսական խուղարկութեան մէջ:

4. Խնկարկութիւններ. - Պատրաստու- թեան առթիւ եղածէն զատ՝ զոր յիշե- ցինք, կային նաեւ ժամակարգութեան մէջ իսկ, եւ կը կատարուէին բուրլառով, որ պաշտօնական խնկանոցն էր: Յանցառ- են վկայութիւնները այդ խնկարկութեանց պահերու մասին: Երեցագոյնը 1284ի Ա- ւետարանացոյցն է, որ Աստուածածնի փոխման նախատօնակին Լոյս գուարք եր- դել կու տայ «բուրմամբ խնկոց շուրջ դա- լով երեցս անգամ՝ մինչեւ կատարի» եր- դը. դարձեալ Համբարձին՝ «որ զխոնկն արկանեն՝ ոչ դադարեն մինչեւ ի կատա- րած» անոր. նմանապէս գիշերային օրհ- նութիւնը երգել կու տայ «խնկարկու- թեամբ մինչեւ կատարի»: Դարձեալ Աւե- տարանագիրը, երկու ճրագալոյցներուն, Դանիէլի ընթերցման՝ երբ Հարցն սկսէր, կը պատուիրէ որ «խոնկ արկանեն (կամ ծխեն) յեկեղեցին եւ ժողովրդեանն»: Նոյ- նը կը հաստատէ եւ Կարգ. մեկ. Ժմ. աղ. «կիւրակէի եւ մարտիրոսաց յիշատակս խնկարկութեամբ եւ շարականաւ... իսկ յապաշխարութեան աւր՝ ոչ» (300-301):

Աւելի մանր տեղեկութիւններ ունինք Տաթևացիէն, որոնք յայտնի է՝ ըստ Սիւնեացի էին, թէ հասարակաց սովորու- թեան: Ան կ'ըսէ՝ թէ «խնկարկութիւնն հանապազօրէ եւ երեք անգամ է. այս- ինքն՝ յառաւօտուն եւ ի ճաշոյն (պատա- րազն) եւ յերեկոյն, եւ իւրաքանչիւրն ե- րեք երեք»: Եւ կ'անցնի ժամերուն. «Յա- ռաւօտուն մին խնկարկի ի Տէր Եթէ զՂԵՐ- քունսն. եւ այս եւս երեք անգամ պար ա- ռեալ», որ Աւետարանացոյցին «շուրջ դալն» է: «Եւ մի յՕրհնութիւնն եւս երեք անգամ», համաձայն նոյն աղբիւրին. «Եւ մի ի Փառք ի բարձունսն՝ եւս երեք ան- գամ»: Դարձեալ «յերեքին աւետարանաւ (Բ. 36), մերձ կացեալ խնկօք բուրելօք»: Կը յիշէ պատարագինը, եւ ապա «նոյնպէս երեք անգամ յերեկոյն, ի Լոյս գուարքն (ըստ Աւետարանացոյցին) եւ յուղեցին եւ յերեքսրբեանն. կամ յարձակմանն խըն-

կարկեն ոմանք» (Հրց. 618): Այդ բոլորը պէտք է իմանալ միշտ «պար առեալ», ինչպէս ըսաւ առաջինին համար, առանց կրկնելու յաջորդներու քով:

Բայց ո՞ր օրերուն կը կատարուէին ա- տոնք: Նոյն վարդապետը կը զգացնէ ա- տիկա այլուր, յիշելով «ի կիրակէի խըն- կարկելն», եւ «նոյնպէս խոնկն ի տօնս սրբոց». եւ կը յարէ. «Իսկ ի պահս՝ ոչ խոնկ եւ ոչ օրհնութիւն» (անդ 628), ինչպէս ըսաւ Կարգ. մեկ. Ժմ.: Կը հե- տեւի որ պահոց օրերէն զատ, բոլոր միւս օրերուն կը խնկարկուէր: Աւետարանա- ցոյցին դայն յիշելը յատկապէս Փոխման տօնին՝ կրնայ նշան մը համարուիլ՝ թէ նախապէս մեծ օրերուն յատուկ էր. ո- րովհետեւ եթէ հանապազօրեայ ըլլար, այն առթիւ յիշեն աւելորդ էր: Ուրեմն յետոյ բազմացաւ. բայց միայն Սիւնիքի՞ մէջ, թէ բովանդակ Հայաստան, կը կրկն- նեմ՝ թէ անյայտ կը մնայ:

Գալով խնկարկութեան չափին, Լաստի- վերացին կը վկայէ անոր ծայրայեղու- թեան, զրելով այսպէս. «անդ շարունակ խնկոցն զօրըշիք, որ ըստ առատութեան նուիրարեքացն հրոյն ներդրօճեալ, զգար- նանարեք ժամանակին բալիցն ցուցանեն զօրինակ, որ ի ծայրս լերանց նստեալ՝ արգելուն զճառագայթս արեգականն» (35), կը հետեւի խորանին տեսարանն ալ կապտելով ժողովրդէն: Ի՞նչ ճաշակ:

«Խնկոցն անուշահոտութիւն բարդելոյ ծխոյ (Լ. Մեկն. պտ. 192):

5. Աղօթքի ձեւեր. - ա. Համբոյք պա- տերու. - Հին սովորութիւն էր՝ աղօթա- տեղի մտնելու ժամանակ՝ համբուրել ա- նոր պատը, ներքին կողմէն: Այսպէս Յո- հան Մամիկոնեան կը պատմէ թէ է. դա- րուն Արծրունեաց իշխանուհին Մարիամ, կին՝ Վարդ Պատրիկի, ուխտի երթալով Ս. Կարապետին սրբավայրը, «Եմուտ ի տաճարն եւ համբուրեաց գորմ տաճարին»: Այս սովորութիւնը կը յարատեւէ, եւ Ս. Գրիգոր Նարեկացին կը վկայէ անոր. «Համբուրի շրթանց ողջունեալ զկառու- ցեալս խորան... Եկեղեցւոյս շինուածոյ» (Աղ. ՀԵ. Թ), այսինքն տաճարն իսկ: Մաշտոցն ալ (ըստ օր. ԺԱ. դարու), ե- կեղեցւոյ օծումէն ետք կը հրահանգէ որ քահանաներն ու ժողովուրդը «գտեղիս խաչանիշ մեռոնին (պատերուն վրայ) համբուրեցեն»: 1605ին Կ. Պոլիս գրուած Տօնացոյց մը, Աւագ հինգշաբթի օրուան մէջ կը գրէ թէ ապաշխարողները, արձա- կումէն ետք, եկեղեցի կը մտնեն, եւ «խո- նարհեալ երկիր պաղանեն եւ համբուրեն զերկու կողմն դրան, այն է ժամարարին եւ ամենայն մտելոցն»: Կը հետեւի որ ե- կեղեցւոյ համբոյքը յատուկ էր անխտիր թէ՛ աղօթքի եւ թէ՛ պաշտամունքի առի- թով հոն մտնելուն:

(Շար. 31)

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ